

Սպիտակ տենդ. հեքիաթ մեծահասակների համար / Նաիրա ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

25.02.2014, ԳԸԱԿԱՆ ԹԵՂԵՐ



Արևը մտավ այն օրը, երբ դահիճը սկսեց իր գործը: Երջանը նեղանում է ամեն օր, ու դահիճը լռությամբ ավարտում է գործը: Կիսատվում եմ, քայց շարունակում եմ ծպտալ: «Վե՛ր կաց ու գնա, – լսում եմ, – մահը չի կարող տեսնել հոգեվարքդ, հեռացի՛ր թափանցիկ այս դիմակահանդեպից, գնա՛ Ծագող արևի երկիրը կամ որտեղ սպիտակ արջերն են ապրում, մահը կապապի, մահը ոչինչ է, իսկ անվտանգ – խուսափուկ այս շրջունը՝ սովորական տերև: Հիշի՛ր ինձ քո ադոթներում»:

Ծաղկադրության կարող եմ ասել՝ վախճ ձեռք է բերել նոր որակներ, քայց ավելի շատ կենդանի եմ, քան մեռած: Ու եթե հիշողությունը անցյալի վավերացումն է ասկ, ուրեմն ինչո՞ւ եմք մոռանում հայացքը՝ սեփական պատմության այդ թափառականին, որ գրանցում է վայրկյանը ու կարևորում անկատար կյույթը մեր ժամանակի մեջ՝ դեպ որը վիճակված է դառնալ մի օր մեզվից յուրաքանչյուրին: Երազներ ըր: Երազները կգտնեն ճահիճը, կգտնեն մեզ ինչ-որ կարևոր վայրկյանի, տղամարդու երազները անպայման մերը կդառնան: Մա՛հը: Մահը ամենևին էլ զվարթ պոռնիկ չէ, դեղնաքիթ այդ վիուկը կտանի մեզ մեր ներսի հավերժությունը դեպի, որ նույնպես մեր որոնածը չէ, քանզի աշխարհին նայում ենք հենց այնպես՝ առանց հայացքի, առանց ներքին լրության: Քրտինքի մահահոտ-սպիտակ կաթիլները, նուրբ ճիւղանների պես կախվել են քթիցս ու ստիպում են երգել՝

Ու քամին, որ թամբել է մահին,
Ֆոռացնում է դեռ վզկապը կարմիր,
Խառնում է մահի՛ն՝ ստեղծում անոթ՝